

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Փրանսիայի եւ Անգլիայի մերձեցումը.— երկու պատրանքների քարեկամական առայայտութիւնները.— Էդուարդ VII-ը Իրլանդիայում.— Լեւոն XIII-ի մահը.— նոր պապի ընտրութիւնը.— նեգրների դեմ հաշտմանը Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում.— Մակեդոնական շարժման նոր ուժով թունկումը.— Վերջին հեռագրները.— Լուրեր թիւրքահայերի կեանքից:

Սովորական քաղաքավարական այցելութիւնից շատ աւելի մեծ նշանակութիւն ունեցաւ Փրանսիական հանրապ. նախագահ Լուրէի այցելութիւնը Էդուարդ VII թագաւորին Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք Լոնդոնում: Այդ երևում է նրանից, որ թէ Անգլիայում և թէ Փրանսիայում ազատ հասարակական համակը-րանքը արտակարգ արտայայտութիւններ ունեցաւ: Փրանսիայում երբ արտաքին գործերի մինիստր Դելկասսէն ազգային ժողովին առաջարկեց բաց թողնել 600,000 ֆրանկ իրրի Լուրէի ուղևորութեան և Իտալիայի թագաւորի ընդունելութեան ծախք — ոչ միայն պատգամաւորների ժողովը, այլև սենատը միաձայն ընդունեց այդ վարկը:

Լոնդոնում զեռ ևս ոչ մի օտարերկրացի չէր արժանացել այնպիսի չքեղ և ոգևորուած ու սրտագին ընդունելութեան, որպիսին ցոյց տուին անգլիացիները հարեան մեծ պետութեան ներկայացուցչին: Այդ բանում թէ թագաւորը, թէ կառավարութիւնը և թէ ժողովուրդը կատարելապէս տողորուած էին միեւնոյն գգացմունքով: Փրանսիական բոլոր մեծ լրագրները յատուկ թղթակիցներ էին ուղարկել Լոնդոն, ուր անգլիական մամուլը ներկայացուցիչները արտակարգ սիրալիրութիւն ցոյց տուին իրանց պաշտօնակիցներին: Աւելի նշանաւոր իրողութիւնն այն էր, որ Փրանսիական պարլամենտի մի խումբ պատգամաւորներ

և սենատի անդամներ՝ իրանց գլուխ ունենալով յայտնի գ'իստուրնելլ զը Կոնստանին՝ Լոնդոնում խորհրդակցութիւն ունեցան անգլիական պարլամենտի անդամների հետ՝ արծարծելով այն միտքը, որ երկու ամենաազատ պետութիւնները համաձայնութիւն կայացնեն՝ միջնորդ դատարանի վճռին ենթարկելու իրանց մէջ ծագող զանազան վէճերը: Ի պատիւ Ֆրանսիական պարլամենտի այդ անդամներին՝ անգլիական պարլամենտի Ստորին Պալատում յուլիսի 9-ին հանդիսաւոր ճաշկերոյթ սարքեցին: Այդ բանկետին ներկայ էին 150 հոգի: Սեղանի շուրջը իրար կողքի նստած էին երկու ազգերի ներկայացուցիչներ, գ'իստուրնելլի մօտ նստած էր Բալֆուրը, Բոդենի մօտ Կեմպբելլ-Բաններմանը, Ջիզֆրիդի մօտ Կրանբորնը, զրանց դիմաց Չեմբերլենը կային: Մի քանի օր անց յայտնի եղաւ, որ նոյեմբերի 12-ին նշանակուած է փոխադարձ այցելութիւն Պարիզում Ֆրանսիական պարլամենտի անդամներին՝ անգլիական անդամների կողմից: Լոնդոնում Դերկասսէն երկարատե խորհրդակցութիւն էր ունեցել անգլիական արտաքին գործերի մինիստր Լանստօունի հետ և վերադառնալով Պարիզ՝ նա մինիստրների խորհրդում կարդաց մի զեկուցում, որի մէջ շեշտում էր այն սրտագին ընդունելութեան մասին, որ ցոյց տուին Ֆրանսիայի ներկայացուցիչներին՝ Էդուարդ VII թագաւորը, մինիստրները և անգլիական ազգը: Դ'իստուրնելլն էլ իր կողմից արժանացաւ Էդուարդ VII-ի քարտուղարից հեռագրի, որի մէջ յայտնուած էր, թէ թագաւորը սրտանց միանում է գ'իստուրնելլի կողմից արտայայտուած բաղձանքին, որ Ֆրանսիական և անգլիական պարլամենտների անդամների մէջ կապուած բարի յարաբերութիւնները ծառայէին ընդհանուր խաղաղութեան հաստատման գործին:

Առհասարակ Էդուարդ VII-ն իր գահակալութեան հէնց առաջին օրից իրան ցոյց է տալիս շատ համակրելի կողմերից. նա աշխատեց չուտով վերջ դնել անգլո-բուլղարական պատերազմին՝ զիջումներ անելով բուլղարներին, նա աշխատեց հանգստացրնել և իրանդացիներին՝ տալով նրանց ցանկացած հողային օրէնքները, որոնք ձյոթմ ընդունուած են ոչ միայն Ստորին Պալատում ձայների ահաբիւն մեծամասնութեամբ (317 ընդդէմ 20), այլ և Լորդերի Պալատում և՛ երկրորդ ընթերցանութեան ժամանակ: Էդուարդ VII-ը չը բաւականացաւ դրանով, նա թագուհու հետ այցելեց Իրլանդիան: Իրլանդիայի փոխարքան յայտարարեց, որ այդ օրուանից վերացւում են Իրլանդիայում գործադրուող բոլոր բացառիկ, ժամանակաւոր օրէնքները: Դուրլինում յուլիսի 9-ին Էդուարդ թագաւորը իրլանդացիների պաշ-

տած սուրբ Պատրիկի չքանչա՛ն հագած՝ նոյն սուրբի անունը կրող դահլիճում ընդունեց իրլանդական ազգաբնակութեան պատգամաւորութիւնը: Զանազան հիմնարկութիւններից մատուցուելին 82 ուղերձներ: Միայն Դուրլինի քաղաքային խորհուրդը մերժեց ուղերձ տալու առաջարկը: Հետաքրքրական են թագաւորի հետեւեալ խօսքերը ի պատասխան այդ բոլոր ուղերձներին. «Թագուհին և ես միշտ համակրել ենք ամեն մի շարժում, որ ուղղուած է եղել իրլանդիայի սոցիալական և նիւթական բարօրութեան բարձրացման: Այս այցի ժամանակ մենք յոյս ունենք աւելի մօտ ծանօթանալ այն պայմաններին, որոնց մէջ ապրում է և աշխատում մեր ժողովուրդը, և այն բանին, որ արուած է աշխատող մասսայի վիճակը թեթեւցնելու նպատակով: Դուք կարող էք հաւաստի լինել, որ իրլանդիայի և նրա մայրաքաղաքի բարօրութիւնը և բոլոր դասակարգերի քաղաքացիների բախտը իմ՝ մշտական հոգատարութեան առարկայ կը լինեն»:

Յայտնի է, թէ ինչ ջերմեռանդ կաթոլիկներ են իրլանդացիները: Դրա նորագոյն ապացոյցը հետեւեալ միաձայն որոշումն է, որ կայացրին իրլանդական պատգամաւորները, երբ լուր ըստացան Լևոն XIII-ի մահուան մասին. «Ինչպէս ներկայացուցիչներ մի ազգի, որ երկար դարերի տանջանքներով վկայեց իր հաւատարմութիւնը սուրբ Աթոռին, մենք աճապարում ենք միանալ իրլանդական հոգեւորականութեան և ժողովրդի հետ նրանց վշտի մէջ»: Իմանալով և յարգելով իրլանդացիների այդ կրօնական զգացումը՝ էդուարդ թագաւորն իջնելով իրլանդական ափը, կինգստօուն, այն ժամանակ, երբ նոր էր ստացուել կաթոլիկ եկեղեցու պետի մահուան ըօթը, պատշաճ խօսքերով արտայայտեց կաթոլիկ հպատակներին իր խորին ցաւակցութիւնը...

Ամբողջ քաղաքակիրթ և անքաղաքակիրթ աշխարհը մի ամիս լարուած ուշադրութեամբ հետեւում էր նախ զառամեալ պապի կեանքի և մահուան օրհասական մաքառման, ապա ս. Պետրոսի գահի չուրջը կատարուող ընտրողական պայքարին: Դա մի լաւ առիթ է խօսելու առհասարակ կղերի դերի մասին մեր ժամանակակից կեանքում, սակայն չ'ուզենալով կրկնութիւնների մէջ ընկնել *), մենք կ'աշխատենք միայն մի քանի ընտրոշ կողմերի վրայ ուշադրութիւն դարձնել: Անշուշտ մի եկեղեցու պետ, որի հօտը 200 միլլիոնից անց է, յամենայն

*) Այդ առիթով տես մեր «Հին Ցաւ», Գղերի Դերը—գլուխը:

դէպս չի կարող քաղաքական աշխարհում զանցառելի քանակ, quantité negligeeable, համարուել: Սակայն միւս կողմից ժամանակի հետ փոխուած մարդկային աշխարհայեցողութիւնը և պատմական հանգամանքները խլել են պապերի գահից այն հըմայքը, որ միջին դարերում հնարաւորութիւն էր տալիս նրան ըստ իր քմահաճոյքի խաղալ թագաւորների և ժողովուրդների հետ, խարոյկի բոցերի մէջ խեղդել ազատ մտքի թռիչքները: Իտալիայի քաղաքական անկախութիւնը պապականութեան անկման ամենանշանաւոր ապացոյցներից մէկն եղաւ. Վատիկանը գործ դնելով բոլոր ներելի և աններելի միջոցները Կլիրինալի դէմ՝ վերջ ի վերջոյ պէտք է խոստովանէր իր անզօրութիւնը՝ կայացած եղելութեան դէմ մաքառելու կորցրած աշխարհական իշխանութիւնը վերադարձնելու: Մնում էր խռովել Կլիրինալից, փակուել Վատիկանի ընդարձակ պարիսպների յետևում և աշխարհի առջև դառն գանգատուել իր «գերութեան» մասին...

Լևոն XIII-ը լաւ հասկանում էր իրերի արդի դրութիւնը, խթանի դէմ աքացելը խելացի չէր համարում. նա աշխատում էր համակերպուել, զիջումներ տնել, զիպլումատիական խաղեր խաղալ հակառակորդների հետ: Եւ պէտք է խոստովանուել, որ շատ անգամ նրան աջողում էր այդ տակտիկայով վերադարձնել մի քանի երկրներում կաթոլիկ եկեղեցու կորցրած մի քանի արտօնութիւնները, օր. Գերմանիայում և Ռուսաստանում: Նա խոյս էր տալիս սուր ընդհարումներից. այդ աւելի երևում է պապի զիջող և մեղմ քաղաքականութիւնից ֆրանսիական հանրապետութեան կողմից յարուցած մի շարք խիստ հակակգերական հարցերում: Նա տեսնում էր, որ արմատական կառավարութիւնը ֆրանսիայում ձգտում է եկեղեցին բոլորովին դարձնել համայնքների մասնաւոր գործ. նա տեսնում էր Կոմբի միսիստութեան կատաղի կռիւը միաբանութիւնների դէմ, և չը նայած այդ ամենին՝ բացարձակ ոչինչ չէր անում, որովհետև ձանաչում էր իր անզօրութիւնը և լաւագոյն էր համարում երևան չը հանել այն: Միայն իտալական կառավարութեան զիմաց հարկ չէր համարում նա ծածկել իր ծայրայեղ անհաշտութիւնը՝ դեմոնստրատիւ կերպով անտես առնելով նրա գոյութիւնը:

Դեռ մեռնող քահանայապետի մահճակալի շուրջը կարգինալների մէջ սկսուել էին եզուիտական դաւեր՝ Սուրբ Պետրոսի գահը այս կամ այն կարգինալի կուսակցութեան ձեռքը գցելու համար: Պատի մահից յետոյ կարմրագլխոտ սուրբ հայրերը փակուեցին Վատիկանի որոշ սենեակներում և վերջը

լաւագոյն համարեցին ընտրելու կուսակցութիւններից դուրս՝ մի անյայտ կարգինալ պապի թափուր մնացած դահի վրայ: Կարգինալ Սարտօն ընդունեց Պիոս X անունը և բացի Իտալիայից՝ բոլոր պետութիւններին յայտնելով իր դահակալութեան մասին՝ հէնց առաջին քայլից նա ցոյց տուեց, որ Իտալիայի նկատմամբ հետեւելու է իր վերջին երկու նախորդներին: Սակայն հէնց այդ նախորդների օրինակը պէտք է ցոյց տար նոր պապին եւ, որ պապականութիւնը կորցրել է իր առաջնորդող, ղեկավարող նշանակութիւնը բոլոր ազատ երկրներում, իսկ թէ ունի դեռ եւ ոյժ, այդ պէտք է վնտրել մնահաւատ ամբօխի, դասակարգային առանձնաշնորհումներով ապրող խաւերի և թիրքականի նման բեմիւ ունեցող պետութիւնների մէջ:

Նախապաշարմունքներից դեռ չ'ազատուած ամբօխը, լինի նա կաթոլիկ թէ բողոքական, ընդունակ է երբեմն այնպիսի բարբարոսութիւններ, քստմնելի անարդարութիւններ կատարել, որ «քրիստոնեաները» սովոր են վերագրել միմիայն «անօրէններին»: Ահա ձեզ Ամ. Միացեալ Նահանգների պէս մի ազատ, քաղաքակիրթ բողոքական երկիր, որ արիւնայեղ քաղաքացիական պատերազմներից յետոյ վերջ էր դրել սեւամորթների կամ նեգրների խայտառակ ստրկութեան, որ այնպիսի հանձարեղ ճշմարտասիրութեամբ դատապարտուած էր հոչակաւոր Բիշեր Ստօուի գրչով: Եւ այժմ հին ստրկատէրերի նոր սերունդը ամերիկական մեծ հանրապետութեան մի քանի հարաւային նահանգներում այնպէս է վարւում նեգրների հետ, որ կարծես չարունակուած լինէին Բիշեր Ստօուի նկարագրած օրերը: Ամերիկայում Լինչի օրէնքով դատել՝ նշանակում է ամբօխի դատաստանով դատապարտել մէկին մահուան: Առանց կանոնաւոր քննութեան, առանց դատարանի՝ մի խումբ անհատներ ըստ իրանց քմահաճոյքի սարսափելի մահուան պատիժներ են որոշում այս կամ այն, շատ անգամ ենթադրական յանցաւորին: Օրէնքը գոյութիւն չ'ունի այդպիսիների համար, և ամբօխային կատաղի բնագոյն է որոշում ամեն ինչ: Լրագրները հաղորդում են, թէ վերջին կէս ամսուայ ընթացքում այսպէս ասած լինչելու 30 դէպքեր են եղել խեղճ նեգրների վերաբերմամբ: Մի քանի տեղերում պլանտատորները իրապէս վերականգնել են ստրկութիւնը և բանեցնում են ու ծեծում նեգրներին, ինչպէս իրանց պապերը: Հասկանալի է, որ այժմ ազատութեան սովոր նեգրները առաջուայ համբերութեամբ չեն տանում սպիտակամորթների այդ բարբարոսութիւնները և կատաղած զինուում են, իրանք եւ յարձակում նեղիչների վրայ առհասարակ մտածում ինքը-

Նապաշտպանութեան մասին: Նեգրներէ թիւը Միացեալ Նահանգներում համեմատ է 10 միլիոնի: Հետեաբար, եթէ Ռուզվելտի կառավարութիւնը լուրջ միջոցներ չ'առնէ պաշտպանելու համար սեւամորթ մարդկանց իրական հաւասարութիւնը օրէնքի առաջ, մարդկութիւնը ականատես կը լինի մի խայտառակ յետադիմական շարժման ազատ եանկիներէ բախտաւոր հայրենիքում: Ռասսայական նախապաշարմունքը և ատելութիւնը նոյնքան տուարդի մի զգացմունք է, որքան կրօնական անհամբերողութիւնը, օտարաշինջ շովինիզմը: Մարդկային սեռի այս վերջին տեսակների վայրագ արտայայտութիւնների կրասսակական երկիրը դեռ մնում է թիւրքիան իր արիւնոռչալ բեժիմով:

Վերջին ժամանակները մի կողմից բոլորի ուշադրութիւնը գրաւել էին սերբիական անցքերը և պապականութիւնը, միւս կողմից էլ բուլղարա-թիւրքական մերձեցումների մասին էին խօսում, և կարծես մակեդոնական շարժումը պահ մի թուլացել էր: Բ. Դուռը շարունակում էր գիմել պետութիւններին՝ կրկընելով ստերեոտիպ դառած իր յայտնութիւնը, թէ «իր ոյժերի չափով կարողացել է անել ամեն ինչ, չը նայած արգելքներին, թէ ենթադրւում է այդ կերպ վարուել և ապագայում, բայց իրերի դրութիւնը դժուարին է...» և այլ և այլն: Թոյլատրուած էր վերաբանալ Մակեդոնիայում բուլղարական դպրոցները, սակայն մի «չնչին» ծանօթութիւնով հանդերձ, ուսուցիչներին պէտք է հաստատելին թիւրք պաշտօնեաները: Կալմանաւորուածներին արձակում են մի դռնից, որպէսզի մի այլ դռնից նորերին լքեն են բանտերը: Խոստացած բեֆորմները մազի չափ առաջ չեն գնում, և զարմանալի էլ չէ, որ թիւրք վարչութեան ուժերից վեր է իր սեփական պաշտօնեաների միջոցով մտցնել դրանց համար անհասկանալի և չը տեսնուած նոր կարգեր: Առանց եւրոպական միջամտութեան, առանց մեծ պետութիւնների երաշխաւորութեան՝ բոլոր խոստումները կը մնան մեռած տառ: Եթէ ուրիշները փորձով այդ չը գիտեն, թիւրքահպատակները լաւ են ուսումնասիրել թիւրքական լուծի բոլոր հրապոյնները, ուստի հաւատալ նրա բարեբար ազդեցութեան անկարող են: Այդ է պատճառը, որ մակեդոնական շարժումը ոչ միայն չէ դադարում, այլ նորից և նորից բռնկւում է, ինչպէս ցոյց են տալիս ամենավերջին հեռագրները, որ բերում ենք ներքեւում.

Կ.-Պոլիս: Մակեդոնական կոմիտեները նախագծել էին շարժումն սկսել օգոստոսի 2-ին, ս. Ստեփանոսի տօնի օրը, բայց հարկ եղաւ սկըսելու նշան տալ անցեալ կիրակի: Մոնաստրիից ստացուած հեռագրները,

որոնք միայն երեկ ստացուեցին՝ հեռագրաձևերը կտրուած լինելու պատճառով, հետեւեալ լրացուցիչ տեղեկութիւններն են պարունակում. «Աւարտամբական հրոսակախմբերը Բենայի մօտակայքում յարձակուեցին մի քանի զիւղերի վրայ. վեց տեղում հրոսակախմբերը կռեցին զօրքերի հետ, իսկ մի քանի տեղերում մահմէդական աղգաբնակութեան հետ: Հրոսակախմբերի նոր եկած առաջնորդների մէջ են գնդապետ Եանկովը եւ Սաբաֆովը: Մոնաստրիքի վիլայէթում, Մոնաստրիքում եւ շրջակայքում զորգոռուած տրամադրութիւն է տիրում: Առեւտուրը եւ հաղորդակցութիւնը դադարել են: Մոնաստրիքի վալին պահանջեց մի զիւղիա զօրք. մի բրիգադ եւ ութ բատալիոն արգէն ճանապարհ են ընկել: Սուլէյման փաշային յանձնուած է հրոսակախմբերի անկարգութիւնները ճնշելու համար նշանակուած զօրքի ղեկավարութիւնը: Կեչանի, Կրատովի եւ Էնգրէ-Պալանկի շրջակայքում յայտնուել են մեծ հրոսակախմբեր: Ուսկիւրի պահեստազօրքը ուժեղացրուած է: Հիլմի փաշան ընդհատեց իր ճանապարհորդութիւնը եւ վերադարձաւ Ուսկիւր:

Սոֆիա: Հաստատ է, որ ապստամբութիւնը տարածուել է Բիտուլի եւ մասամբ Ուսկիւրի ու Սալոնիկի վիլայէթներում: Բազմաթիւ հրոսակախմբեր, Գրայի հրացաններով զինուած, աւերեցին թիւրքական զիւղեր, զօրանոցներ, կայարանների շինութիւններ եւ կամուրջներ: Զօրքերի պատահելիս՝ հրոսակախմբերը թագնւում են լեռներում, Կրատովի շրջակայքում յայտնուեցին մի քանի հրոսակախմբեր, որոնց միացաւ տեղական ազգաբնակութիւնը: Թիւրք կառավարութիւնը հաւատացնում է, որ նա թոյլ չի տալ զազանութիւններ: Բուլղարական կառավարութիւնը մեծ հետաքրքրութեամբ, բայց բոլորովին հանդարտ կերպով հետեւում է ղեպքերին, յոյս ունենալով, որ Բ. Դուռը այն կատաստրոֆի առաջը կ'առնի, որ կարող էր իշխանութեանը վտանգաւոր ձեռնարկութեան մէջ գցել: Զինուորական մինիստրը խիստ հրամաններ ուղարկեց սահմանի պահակաւորներին, որպէսզի նրանք արգելեն թիւրքական զինուած խմբերին բուլղարական սահմանն անցնել:

Սալոնիկի: Մոնաստրիքի վիլայէթում ընդհանուր ապստամբութիւն է: Ապստամբներն այրում են տները, որտեղ հաւաքած են նոր հացահատիկները: Կրուշեւում զինամիտային փորձ կատարուեց. սպանուած են 30 աստիճանաւորներ եւ թիւրք ընտանիքներ: Սալոնիկում հանդարտ է:

Սոֆիա: Յուլիսի 25: Վելես-Սալոնիկի երկաթուղիական գծի բելսները Գրադակայի մօտ հանուած են եւ տարուած: Հաղորդակցութիւնը Սալոնիկի եւ Բիտուլի միջեւ անհնարին է: Արեւելեան երկաթուղիների վարչութիւնը յեղափոխական կոմիտեից հրաման ստացաւ դադարեցնել զընացքների երթեւեկութիւնը: Բուլղո-փաշան իր զօրքերով ուղեւորուեց Բիտուլի: Յեղափոխական շարժման անմիջական պատճառները կայանում են նրանում, որ աղգաբնակութիւնը նկատեց, որ հիւպատոսների կատարած բնութիւնը ոչինչ հետեւանքների չը հասցրեց. թէպէտ եւ կալանաւորներ-

րից մի քանիսը արձակուեցին բանտից, բայց աւելի եւս մեծ թիւ նորից կալանաւորուեց:

Սոֆիա: Լաւ աղբիւրից տեղական մակեղոնական շրջանները հաղորդում են, որ ապստամբութիւնը շուտով տարածուելու է Ուսկիւքի ամբողջ վիլայէթում: Թիւրքերը հալածանքի են ենթարկւում հրոսակախմբերի կողմից եւ կորցրին մեծ քանակութեամբ մարդիկ: Գրայի հրացաններով զինուած հրոսակախմբերը եւ կացիներով զինուած գիւղացիները կոռւում էին հերոսաբար: Ապստամբների մեծ խմբերը կենտրոնացած են Կումանովի եւ Կրատովի միջեւ. նրանք բռնել են Բեննայի, Օխրիդայի եւ Բեղալիայի միջի կիրճը:

Բելգրադ: Թիւրքական մի զինուոր սպանեց Բիտովիայի ռուսաց հիւպատոս Բոստկովսկուն: Բոստկովսկու մահը մեծ յուզումներ առաջ բերեց բոլորի կողմից: Հիւպատոսը ամառն անց էր կացնում Բիտովիայի մօտի Բուկովո վանքում, որտեղից իւրաքանչիւր օր գալիս էր հիւպատոսարան: Քաղաքի մուտքի մօտ զետեղուած է թնդանօթածիգների զօրանոցը: Այնտեղից անցնելիս հիւպատոսը նկատում է, որ թիւրք պահպան զինուորը սպառնական հայեացքով է նայում նրա վրայ եւ պատույ նշան չէ ցոյց տալիս: Հիւպատոսը մօտենում է զինուորին, որպէսզի հարցնէ, բայց այդ ժամանակ պահապանը երեք անգամ արձակում է հրացանը: Հիւպատոսը մեռած գետին է ընկնում:

Կ.-Պոլիս: Բ. Դուռը տեղեկութիւն է ստացել, որ ապստամբները այրել են հինգ զիւղ, որոնց քնակիչները՝ մահմէդականներ եւ յոյներ՝ լուրերի համեմատ, սպանուած են: Բ. Դուռը բողոքող յայտագրով դիմեց մեծ պետութիւններին: Մարշալ Օմար Բուզդի-փաշան ճանապարհ ընկաւ Պրիզրենից դէպի Մոնաստերի, որպէսզի ստանձնէ այն զօրքերի ղեկավարութիւնը, որոնք կենտրոնացած են այդ վիլայէթի հրոսակախմբերի անկարգութիւնները ճնշելու համար:

Բելգրադ: Յուլիսի 27-ին գիշերը ջարդեցին թիւրքական միսսիայի լուսամուտների ապակիները: Յանցաւոր Միլենկովիչը ձերբակալուած է: Դէպքը հետեւանք է այն ընդհանուր զայրոյթի, որ առաջացել է Բոստկովսկու սպանութեան պատճառով:

Սալոնիկի: Թիւրքական շղթաները պաշտպանում են Բիտովիան: Քաղաքի խանութները փակուած են: Երկաթուղու բանուորները հրոսակների կողմից արուած մահուան սպառնալիքից դրդուած՝ հրաժարւում են երկաթուղու գիծը սարքելուց: Վտանգի պատճառով զանազան կողմերից պահանջուում են, որ Մակեդոնիայում երկաթուղու մարդատար գնացքների երթեւեկութիւնը դադարեցնուի:

Կ.-Պոլիս: Սալոնիկիից ստացուած տեղեկութիւնները համեմատ հրամայուած է մոբիլիզացիայի ենթարկել բեդիֆների 24 բատալիոն: Մոնաստիրի վիլայէթում մի քանի առանձին դէպքերում գիւղական ազգաբնակչութիւնը միանում էր հրոսակախմբերի հետ. միւս կողմից՝ մահմէդականներ

էլ կազմել են իրանց հրոսակախմբերը, որոնք մակեդոնական հրոսակախմբերի հետ ընդհարումներ են ունեցել եւ մեծ կորուստներ տուել:

Պետերբուրգ: «Правительственный Вѣстник»-ում տպագրուած են. 1) Կ.-Պոլսի ոռոսաց զեսպանի հեռագիրը, 2) Բիտուլիայի հիւպատոսարանի կառավարչի հեռագիրը Բոստոնիւսկու սպանութեան մասին Հալիմ ժանդարմի ձեռքով եւ այն մասին, թէ հիւպատոսի կառավարանի վրայ յետոյ գնդակ են արձակել քաղաքում եւ 3) արտաքին գործերի մինիստրի հետեւեալ հեռագիրը Կ.-Պոլսի զեսպանի անունով, յուլիսի 27-ից. «Թագաւոր Կայսրը սուլթանից հեռագիր ստացաւ, որով խորին ցաւակցութիւն է յայտնում Բիտուլիայի ոռոսաց հիւպատոսի մահուան առիթով: Միաժամանակ ներկայացրի Բարձրագոյն հայեցողութեան ձեզանից ստացած հեռագիրը Բոստոնիւսկու վրդովեցուցիչ սպանութեան մասին, եւ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել, որպէսզի զուր՝ առանց սահմանափակուելու մեծ վէճի թիւ տուած հաւատարկացումներով՝ ամենեւեմ շուտ պահանջներ յայտնէք թիւրք կառավարութեանը, որ լիովին բաւարարութիւն տայ եւ շուտափոյթ կերպով պատժի ենթարկէ թէ յանցաւորին եւ թէ բոլոր զինուորական ու քաղաքացիական անձերին, որոնց վրայ է ընկնում կատարուած յանդուգն չարագործութեան պատասխանատուութիւնը:

Ս. Թարգմանչաց տօնին Պոլիս, Ղալաթիայի խորհրդարանի մէջ՝ նախագահութեամբ Օրմանեան պատրիարքի եւ ներկայութեամբ Իզմիրեանց զրական յանձնաժողովի, ինչպէս նաեւ եկեղեցական եւ աշխարհական բազմաթիւ անձնաւորութեանց, Մկրեան քահանան կարդաց յանձնաժողովի տեղեկագիրը, որից իմացուեց, որ այս երկամեայ չրջանի մէջ ներկայացուած են եղել երկասիրութիւններ, որոնցից երկուսը արժանայան երկրորդ մրցանակի, դրանք են՝ Սմբատ վ. Սաափէթեանի «Ներսէս Լամբրոնացին» եւ Սաչիկ Լեոնեանի «Աղթամարայ կաթողիկոսութիւնը», իւրաքանչիւրին 35-ական օսմ. ոսկի, իսկ Բ. Ս.-ի «Պուլանք» կամ «Հարք գաւառ» ազգագրական երկասիրութիւնը ստացաւ երրորդ մրցանակը՝ 20 ոսկի:

Զմիւռնիայում յուլիսի 12-ին վախճանուել է Մելքիսեդէկ արքեպիսկոպոս Մուրադեանը:

Կիլիկիայի կաթողիկոս Սահակը յունիսի 25-ին ժամանել է Ադանա, ուր նրան ցոյց են տուել մեծ պատիւներ: Այնտեղ պէտք է սպասէ, մինչեւ որ սուլթանը իրադէ տայ նրան՝ Պոլիս գնալու իրան ներկայանալու համար:

Ռուս լրագրներում տպուած են հետեւեալ հետազոտները.

«Յուլիսի 27-ից. Բ. Դուռը գրաւոր պատասխանեց Ռուսաստանի արած հարցումին՝ Էրզրումի և Բիթլիսի վիլայէթներում հայերի դէմ քիւրդերի կողմից սպառնացող վտանգի մասին. նա հերքում է վտանգը»:

«Արտասահմանեան հիւպատոսների ղեկուցադրերից երևում է, որ Սասունում և նրա շրջակայքում խլրտումն ու ժեղանում է, որովհետև տեղական մահմէդական ազգաբնակիւթիւնը թշնամական տրամադրութիւն է ցոյց տալիս հայերի վերաբերմամբ»:

Լ. Ս.

Յուլիսի 29: